

Իր լոյսերովն է օծեր:
 Ու նայեցայ հանդիպակաց ծաղկաստանին ալ վըրան,
 Լեւակներուն վրայ կապոյտ,
 Չքնաղ, պչրոտ ու անփոյթ`
 Դաստակդ էիր երկարեր:
 Ու դիտեցի,
 Չէիր մոռցեր սա ծըխանն ալ դըրացի,
 Չէ՛իր մոռցեր եւ ճամբաներն ամայի,
 Չէ՛ր մոռցեր...
 Չէ՛, այսօր ալ զիս մոռնայիր,
 Եթէ այդպէս պետք էր ըլլար, որպէսզի
 Արծաթէիր շուրջս անխըտիր
 Ամէն դալար ու ծաղիկ:
 Որովիտես ես քեզի
 Մտքիս թեւո՛վն ալ կը հասնիմ երջանիկ.
 Քանզի նոյն իսկ եթէ ըլլաս
 Ամպին ետին ալ պահուած`
 Ես կը հասնիմ անկասկած,
 Քու պերճ կայքիդ` հեք իրերուն համար անհաս:
 Ես կը հասնիմ անկասկած,
 Քեզի՛, քեզի՛, քո՛յր աստուած,
 Եթէ երբեք իմ հոգւոյս
 Լուսախորշին մէջ պահուած
 Վերջին նըշոյլն ալ` անլոյս
 Խոռոչի մը ծոցն իյնայ.
 Վերջին նըշոյլն այն ցոլբերէն` զոր գիշերներն եմ ժողված.
 Լիալուսնի արծաթաշող գիշերներն...

Բ

Մահի՛կ ոսկեսար, այս գիշեր նորէն
 Սարսուացի լոյսիդ մէջ երանական.
 Եւ հոգիիս մէջ ինկան
 Խայտանքի նոր թիթեռներ.
 Ծիածանի սանդուխտն վեր`
 Նոր երանգներ տարօրէն:
 Մահի՛կ ոսկեսար, այս գիշեր նորէն,
 Մոռցըւած երգի ծըւէն,
 Կամ անուն,